Այժմ լրանում է եօթն ամիս, որ ես սովորում եմ մի Նոր հեղինակութեամբ աշխատասիրած քերականութեան վերայ, Նոր դիւրին ոճով. գլխաւորապէս գործնական դասախօսութեամբ, մի ուսումնական վարժապետի մօտ, որի գեղեցիկ ըմբռնելի ձևով դասախօսութիւնը յիրաւի ուշադրութեան արժանի է։ Վերջապէս եօթն ամսոյ մէջ կհամարձակիմ ասել, բաւականին սովորելով և միանգամայն ծծելով գեղեցիկ Նիւթերը Քերականութեան, ուրիշ ուսանելի առարկայից հետ։ — Այժմ իմ աշխատութեան Նախախայծ փոքրիկ պտուղները, իմ քնքուշ քոյրերին ցոյց տալով և մտցնելով Նոցա մաքուր և մատղաշ սրտերի մէջ ուսումի ամենահարկաւորութիւնը։

Ուստի խոնարհաբար խնդրում եմ Խմբագրութենէդ պատուական Արարատայ, որ իմ այս փոքրիկ յօդուածը հանդերձ առանձին և մի ոտանաւորով տեղաւորել Նորա ոսկէ տողերի մէջ, շարժելու շատերի սիրտը և համակրութիւնը դէպ ի ուսումն։

Օրիորդ Շուշանիկ Տ. Առաքելեանց.

Ի 29-ն Մայիսի 1871 ամի

Ի Քաղաքամասն Նորք։

## ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի՞նչու ես տխրած, մայր իմ Հայաստան,
Ի՞նչու ես սգով, լցուած անպայման,
Որդիքդ ժողոված, դէպ քեզ կդիմենք,
Ոսկէ դար. փառաց, քեզ կհասցնենք։

Թափիր քո սուգը, սրտիդ կսկիծներ,
Վերցուր սև քողդ, փարատիր խոցեր,
Թափիր քեզանից տխրութեան փոշին,
Նորոգ պճնուիր, զարդով թանկագին։

Սրբազան հողդ քաղցր է ինձ համար.
Պատուելի՜ մայր իմ, Հայաստան արդար,
Երբեմն օտարաց կոխան է եղած,
Բայց էլի Հայոց քաղցր է անկասկած,

Երբ քո ցաւերը, աչերս տեսնում է,
Դառը արցունքով, սիրտս ողբում է,
Քեզ եմ աղաչում, երեսիդ կանգնած
Բարձիր քեզանից ամպեր սևամած։

Աչս բաց անեմ՝ Մասիսին նայեմ,
Ա՜խ իմ կարօտս քեզանից կառնեմ,
Կարօտ սիրավառ, կարօտ մայրական,
Որ որդւոց սրտից կըղխէ աննման։

Արդէն ծաղկել են քո բուրաստաններ,
Մա՛յր կժողովես քաղցր պտուղներ,
Թալկացեալ սիրտդ՝ զօրութի՜ւն կառնէ,
Դարևոր վշտից յողջութիւն դիմէ։

Պանդխտութեան մէջ հերիք թափառես,
Աղի արցունքով սուրբ կեանքդ մաշես,
Սուրբ կաթով սնուած որդիքդ ցիրուցան,
Ընդունիր ծոցդ, քաղցրիկ Հայաստան։

Իմ սուրբ Հայաստան, քեզ շատ եմ սիրում
Ամեն րոպէում քեզ չեմ մոռանում,
Երբ որ տեղիցս ես վեր եմ կենում,
Քեզ համար յԱստուած աղօթք եմ անում.

Օրիորդ Շուշանիկ Նազարեան
Տէր Առաքելեանց։

Քաղաքամասն Նորք։

## ՄԵԾ ՊԱՐՆԻ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ

Թէպէտ իմ անզօր գրիչս չունի այնքան կարողութիւն հրատարակել Ազգային քաջագործութիւնները, բայց երախտիք բազմաջան և ազգապարծանք վաստակաւորաց ստիպում է և յատուկ պարտաւորութիւն եմ համարում ծանուցանել իմ սիրելի Ազգին։ Այն քաջագործութիւնըն մեծ Պարնիոյ հասարակութեան որ յատուկ հիմնադիրն գոլով Փամբակ գաւառակի. յառաջինութենէ ստիպուած ցանկալի համարեցին մեկ յաւերժական յիշատակ յետ թողուլ. Ի՞նչ եթէ ոչ իրենց վաղեմնի հին եկեղեցին Նորոգել հասարակ շինութեամբ. մինչև ցայն միջոցը չէին տեսած ոչ կոփածոյ քարինք և ոչ յարմար որմունք, ի

1858 ամի ձեռք առած շինութիւնն մեծ ջերմե-
ռանդութեամբ. որոնց բարձրութիւնն չ'հասած գետ երկու կանգունի չափ բարձրութեան, զարձրքին մասցրութիւններն կրաշաղախ և քարայարկ շինելոյ՝ որ միայն մին հատ տեսած կայինք ի մեծ Դարաքիլիսայ. Այն օրինակ ունելով Դարդան Սրբազանի յատուկ խնդրանօք օժանդակութեան-րըն, ճարտարապետի կապալագրերը և պայմանագրութիւնն դարձրին դէպի այն շքեղ շինութիւնը մեծի ծախու յանձն առնելով ճարտարապետ ասացի այժ բանաստեղծ, ոչ միայն գովանի արվեստի արմնագրութեան, որ յատուկ մին է ի մէջ այնպիսի արվեստաւորների, այլև ամենայն գործոց չարեաց և գլխաւոր որբեցութեան և խռովարարութեան. Շինել և քանդելու թիւն յեր'քի հասու. թէպէտ բանագիտութեան արեգական սրածայր բոցաճաճանչ ճառագայթն նորանց ազգութեան խաւարին շատ շուտով չէղև երևան. սակայն Աստուածային նախախնամական ազդեցութիւնն ծագելով ազգասէր հոգևոր էշխանաց սրտերի մէջ նաև բարեկրօն Մկրտիչ Աւագ քահանային Համամեցւոյ յորդորանօքն ի բաց ձըգեցին ազգութեան խաւարն և սնոտի երկիւղալի մտածութիւններն, նոր վարպետ ընտրելով այն է՝ քաջավաստակ Ներսէսն Դաւթեան Աղէքսանդրապօլցի և նորին սրտեռանդ արհաջան աշխատութեամբ առաջնեալ այս տարիքներս. Այս երկարաձիգ միջոցիս բարեպաշտօն ժողովրդականաց արինալբիրտ աշխատութիւնն'ր որ անյուսահատելոյ սիրովն յանձնառու եղած էին. Տաբարախտ բերմունքներն ևս մեկ կողմից յայտնի պատերազմ՝ բաց արին, այն արգաւանդ և բերրի դաշտն՝ որ շատ և շատ օտար ազգաց խնամատար կ'գտնուէր, իւր մատաղատուն զաւակները քաղցած թալկացած թողելով. այն անուշահամ կարկաչաքայլ առուակներն երկնային առատահոս անձրևն ևս ցամաքացած երես դարձրին, մինչև անգամ մկունքն գլուխ վերցրած քաջ ախոյեան դարձած ջնջեցին բոլոր բուսեղէններն, այն մկներն որ իրենց չափիցն շատ փոքր էին և ամենևին չը լսած. ցաւալի գիւղացիք և շատերն հեռաւոր երկիրներ ողորմում էին հաց գնելոյ. սակայն բարեջան վաստակաւորներն այս բոլոր հարուածներին նախնի քաջաց նման գիմանալով և Աստուծոյ կողմանէ մեկ փոքր համարելով իւրեանց տեղական առածը բերանից չէին վեր գցում,, հէ մենք Աստուծոյ տունը շինենք, Աստուած մեր տունը կ'շինի. Եւ մեկ բարեպաշտութիւն համարելով նոր գըտնուած հաստատ հիմն կրաշաղախ իւրեանց նախնակին համաձայն երկայնութիւնն և լայնութիւնն որի վերայ շինեցին շքեղաշուք և գեղեցիկ եկեղեցին վեց քառակուսի սեան վերայ երկու արվեստագործ գմբեթով և ութն վայելուչ լուսամուտք, որոց երեքի հայեցուածքն դէպի հիւսիս և հնգինն դէպի հարաւ արքունական մեծ ճանապարհի վերայ.

Այս մեծածախ շինութիւնն ի խրախոյս բաղմաջան վաստակաւորաց կ'խնդրեմ Արարատ պատուական ամսագրոյդ էջերով հաղորդել մերազնէից.

Սօա Սարգսեան Նուղնէջեանց.

30-ն Մայիսի 1871 ամի
ի Մեծ Պարնի.

ՀԱՆԴԷՍ Ի ԴԶԼԱՐ.

### Խաչատրաբեան Արարատ Աճատրեայ

Այնել Մայիսի 30 ին, Սուրբ Էջմիածնի Կաթուղիկէ եկեղեցւոյ տօնի օրը՝ այս տեղ Դզլարում կատարվեցաւ մի փառաւոր հանդէս. Այդ օրը օրհնուեցաւ սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ բակում շինուած այն քարաշէն պատուական Հայոց ուսումնարանի տունը, որոյ հիմքը օրհնել էր մեր արժանայիշատակ և արժանընտիր Գէորգ Վեհափառ Կաթուղիկոսը 1867 թուականին, երբ իւր անմոռանալի այցելութեամբ բաղտաւորեց մեր քաղաքը.

Դզլարայ Հայոց հասարակութիւնը թէ Վեհահափառ Կաթուղիկոսի օրով, և թէ զանազան ժամանակներում սորա մասին նուիրեց մի նշանաւոր գումար, մինչև ինն հազար (9000) մանէթ. Երբ Աստրախանայ և Կովկասու վիճակաւոր Առաջնորդ բարձր Սրբազան Գէորգ արք Ե-